ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., դոցենտ Արսեն Աշոտի Թավադյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հակամենաշնորհային (մրցակցային) իրավունք

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Հակամենաշնորհային (մրցակցային) իրավունք» դասընթացը ուսումնասիրում է մրցակցության պաշտպանության, զարգացման և կարգավորման իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում: Դասընթացի շրջանակներում քննարկվում են մրցակցային իրավունքի հիմնական ինստիտուտները՝ հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքը, տնտեսական համակենտրոնացումը, անբարեխիղճ մրցակցությունը, ինչպես նաև պետական միջամտության սահմանները:

Դասընթացը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական բաղադրիչ՝ հիմնված դատական և վարչական պրակտիկայի վրա:Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակը և խնդիրները

Նպատակը՝
ուսանողների մոտ ձևավորել տեսական և գործնական գիտելիքներ մրցակցային իրավունքի ոլորտում, ինչպես նաև զարգացնել իրավական վերլուծության և կիրառման հմտություններ:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

• մրցակցային իրավունքի հիմնական հասկացությունների յուրացում
• մրցակցային հարաբերությունների պետական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրություն
• իրավական նորմերի կիրառման հմտությունների զարգացում
• դատական և վարչական պրակտիկայի վերլուծություն
• իրավաբանական դիրքորոշումների ձևավորման կարողության զարգացում

Դասընթացի օբյեկտը և առարկան

Օբյեկտը՝ տնտեսական հարաբերություններն են մրցակցության ոլորտում:

Առարկան՝ մրցակցության պաշտպանությանն ուղղված իրավական նորմերը և դրանց կիրառման պրակտիկան։

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է ունենալ նախնական գիտելիքներ՝

քաղաքացիական իրավունքից

քաղաքացիական դատավարությունից

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Գիտելիքները ՝

մրցակցային իրավունքի հիմնական հասկացությունները և սկզբունքները

շուկայի սահմանման և վերլուծության մեթոդները

հակամրցակցային վարքագծերի տեսակները

տնտեսական կենտրոնացման կարգավորման հիմքերը

պատասխանատվության ձևերը մրցակցային իրավունքի ոլորտում

Հմտությունները ՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

իրավական նորմերի կիրառումը կոնկրետ իրավիճակներում

իրավական խնդիրների վերլուծություն և լուծումների առաջարկում

ընդհանրական իմացական հմտությունները՝

վերլուծական մտածողություն

փաստարկված իրավական դիրքորոշման ձևավորում

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

իրավական խնդիրների ինքնուրույն լուծում

մասնագիտական գործունեության շրջանակներում պատասխանատվության գիտակցում

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություններ
- սեմինարներ և քննարկումներ

- դատական գործերի վերլուծություն
- գործնական առաջադրանքներ
- ինքնուրույն աշխատանք

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Իրավագիտություն» կրթական ծրագրում՝ 4 ակադեմիական կրեդիտ (18 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական պարապմունքներ։

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-րդ կուրսի 1-ին կիսամյակում։

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**18**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**10**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**86**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	**30**
1.2.2.Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**56**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**26**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**30**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1.Ներածություն	2	1	1
Թեմա 2. Մրցակցության նպատակները	2	1	1
Թեմա 3. Տնտեսական շուկա	2	1	1
Թեմա 4. Սուբյեկտներ	2	1	1
Թեմա 5.Հակամրցակցային համաձայնություններ	2	1	1
Թեմա 6. Հակամրցակցային համաձայնություններ II	2	1	1
Թեմա 7. Գերիշխող դիրք.	3	1	2
Թեմա 8. Պետական աջակցություն. Տնտեսական համակենտրոնացում. Անբարեխիղճ մրցակցություն	3	1	2
Ընդամենը	18	8	10

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1.

Մրցակցության և հակամենաշնորհային իրավունքի հասկացությունը, սկզբունքները, դերը տնտեսության մեջ։

Թեմա 2.

Մրցակցության պաշտպանության նպատակները և տնտեսական նշանակությունը։

Թեմա 3.

Տնտեսական շուկայի սահմանումը և վերլուծության մեթոդները։

Թեմա 4.

Տնտեսվարող սուբյեկտներ, անձանց խումբ, վերահսկողություն։

Թեմա 5-6.

Հակամրցակցային համաձայնություններ, կարտելներ, թույլատրելի համաձայնություններ։

Թեմա 7.

Գերիշխող դիրք և դրա չարաշահում։

Թեմա 8.

Պետական աջակցություն և դրա ազդեցությունը մրցակցության վրա։

Թեմա 9.

Տնտեսական կենտրոնացում, միաձուլումներ և ձեռքբերումներ։

Թեմա 10-11.

Անբարեխիղճ մրցակցություն և դրա տեսակները։

Թեմա 12.

Պատասխանատվություն մրցակցային իրավունքի խախտումների համար։

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1.Пузыревский, С. А. Конкурентное право : учебник / Д. А. Гаврилов, С. А. Пузыревский, Д. И. Серегин ; отв. ред. С. А. Пузыревский. - Москва : Норма : ИНФРА-М, 2019. - 416 с.

2. Губин, Е. П. Предпринимательское право Российской Федерации: учебник / Губин Е.П., Лахно П.Г., - 3-е изд., перераб. и доп. - Москва :Юр.Норма, НИЦ ИНФРА-М, 2018. - 992 с.

3. Российское предпринимательское право : учебник / В.А. Хохлов, Р.С. Бевзенко, Т.А. Волкова [и др.]; под ред. В.А. Хохлова. - 3-е изд., перераб. и доп. - Москва : РИОР : ИНФРА-М, 2017. - 337 с.

4.Егорова М.А., Конкурентное право в таблицах и схемах : учебное пособие / отв. ред. М.А. Егорова - М. : Юстицинформ, 2018. - 144 с.

5. Тенишева А.П., Шишко И.В., Лужбина Е.Л. - Антимонопольное регулирование: проблемы законодательства, теории и практики. Монография - Проспект – 2018. – 258с.

6. Թավադյան Ա.Ա. Հակամրցակցային համաձայնությունների իրավական կարգավորումը ՀՀ-ում, Հայրապետ, 2015